ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Վերնագիր՝ ԵՄ-ն հանուն կլիմայի դիմակայունության- «Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրներում դեկարբոնիզացման, կլիմայի դիմակայունության և էներգետիկ անվտանգության (EU4Climate Resilience) ծրագիր



Իրականացման ժամանակահատված: 01.01.2024 - 31.12.2027

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 17 000 000

Ընդհանուր բյուջե: € 19 583 849

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ), Organisation for Economic Cooperation and Development (OECD)

Նախագծի նկարագրություն:

EU4ClimateResilience - բազմադոնոր գործողություն է, որն աջակցում է Արևելյան գործընկերության երկրների (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) կանաչ անցմանը, նպաստում դեկարբոնիզացման, էներգետիկ անվտանգության և կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության բարձրացման միջոցառումներին:

Այն օգնում է բարելավել կլիմայի փոփոխության և հարմարվողականության քաղաքականությունները, հասնել Փարիզյան համաձայնագրի ներքո մեղման նպատակներին և ԵՄ-ի հետ երկկողմ համաձայնություններին՝ ներառյալ Ազգային սահմանված գործողությունների (ԱՍԳ) 2025 թարմացմանը, օրենսդրական շրջանակի բարելավմանը, և ԱՍԳ-ների թարմացմանը, Չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը, և կլիմայի փոփոխության՝ ոլորտային քաղաքականության մեջ ներառմանը:

Ծրագիրը նաև աջակցում է հարմարվողականության տեղական նախագծերին, ամրացնում է է քաղաքների և համայնքների դիմակայունությունը: Կայուն ներդրումներ մոբիլիզացնելու նպատակով ծրագիրն աջակցում է կանաչ պարտատոմսերի թողարկմանը: Ուկրաինայում ծրագիրն արձագանքում է Ռուսաստանի ագրեսիվ պատերազմի հետևանքով առաջացած վերակառուցման կարիքներին:

Ակնկալվող արդյունքներ:

1. Կլիմայի փոփոխության մեղման քաղաքականության շրջանակների և ռազմավարությունների թարմացում, և իրականացման առաջընթաց:
2. ՉՀՀ համակարգի բարելավում:
3. մինչև 10 ցուցադրական նախագծերի իրականացում, ներառյալ կենսաբազմազանությունը և առողջ էկոհամակարգերը՝ կլիմայի հարմարվողականության օգուտների ցուցադրմամբ:
4. Ազգային օրենսդրական շրջանակի ուժեղացում՝ կանաչ ֆինանսավորման և մինչև 3 կանաչ պարտատոմսերի թողարկման համար:
5. Ուկրաինայում հետպատերազմյան կանաչ-վերակառուցման աջակցության տրամադրում՝ կանաչ և թվային օրակարգին համահունչ.